ՀԵՅԵԳԻՏՍԵԿԵՆ

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ՈՒՇԱԳՐԱՎ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ 1304 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ

Նախիջևանը դարերի ընթացքում եղել է օտարազգի զավթիչների բռնատիրության տակ, սակայն տեղի հայ բնակչությունը, այդուհանդերձ, շարունակել է զարգացնել իր ազգային դարավոր մշակույթը: Գտնվելով առևտրական մայրուղիների խաչմերուկում, Նախիջևանը հանդիսացել է նաև արվեստի զարգացման կենտրոններից մեկը: Այստեղ գործել են բազմաթիվ գրչատներ, ընդօրինակվել ձեռագրեր: Պահպանվել են մի շարք գրիչների ու ծաղկողների անուններ, որոնց գործունեությունը ծավալվել է Նախիջևանում և շրջակա գյուղերում ու ավաններում: Մատենադարանում պահվող Նախիջևանում ընդօրինակված 30-ից ավելի ձեռագրեր նկարագրված են:

Առավելապես աչքի են ընկել Աստապատի գրչության դպրոցները: Աստապատը գտնվել է Արաքսի ձախ ափին և, ըստ գրավոր աղբյուրների, եղել է հոգևոր-մշակութային արժեքներով հարուստ մի կենտրոն[1]: Այստեղ, 14-րդ դարում, Սբ. Վարդան և Սբ. Ստեփաննոս վանքերին կից, հիմնվել են գրչատներ, որտեղ դասավանդել են Գրիգոր Տաթևացու աշակերտները: Սբ. Ստեփաննոս վանքի (կոչվել է նաև Կարմիր վանք) գրչատունը գործել է մինչև 18-րդ դարը և համարվել «բարձր տիպի դպրոց»: Այստեղ սովորել են նաև գրչության, մանրանկարչության արվեստը և ընդօրինակել ձեռագրեր: Ահա այս գրչատանն էր ձեռագիր նկարազարդում Սիմեոն ծաղկողը (14-րդ դար) Նրանից պահպանվել ու մեզ է հասել միայն մեկ ձեռագիր՝ 1304 թվականի Ավետարանը[2]: Ձեռագիրը գրել է Հակոբ գրիչը, Նախիջևանում: Իր գործի մեջ բավականին հմուտ, զարգացած ու բանիմաց այդ գրիչը ոչ միայն ընդօրինակել է, այլև ձեռագրի բազում էջերում թողել բացատրություններ՝ տեքստում եղած անհասկանալի կամ օտար (հունարեն) բառերի մասին: Ձեռագիրը, գրվելուց հետո, տարվել է Աստապատ և հանձնվել Սիմեոն ծաղկողին՝ նկարազարդելու:

Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքս, որ կոչի Նախիջաւան, մեծ նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր: Եւ կատարեցաւ նաղաշուքիւն սորայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցե/ա/լ, առ ափն հեղաշարժ և ծիածաւալ գետոյս Երասխայ... թողութիւն մեղաց խնդրեցէք գծողի սորա Յակոբայ... զծաղկողն և զկազմողն Սիմէոն... զի բազում աշխատեցաւ»[3]: Մեծածավալ թղթյա այս մատյանի գեղարվեստական հարդարումը և ընդգրկված զարդամոտիվները չափազանց ինքնատիպ են ու հետաքրքրական:

Սիմեոն ծաղկողի արվեստի ամենամեծ արժանիքն այն է, որ նրա զարդանկարները մեծ մասամբ իմաստավորված են, հարուստ են ոչ միայն

---

[1] Սամվելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա., Երևան, 1931 թ., էջ 164:
[2] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 3722:
[3] Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 25:

կրոնական թեմաների խորհրդանիշերով, այլև նրա բազմաբովանդակ լուսանցազարդերն առավելաբար կապվում են դիցաբանական, առասպելաբանական, հեթանոսական հավատալիքների ու ժողովրդական ավանդույթների, պաշտամունքի առարկաների, կենաց ծառի ու ծնող զույգի խորհրդանիշերի հետ, որոնք արտահայտված են վառ երևակայությամբ ստեղծված գունագեղ պատկերներով:

Այս զարդանկարներից շատերն արդեն արժանացել են մասնագետների ուշադրությանը: Հատկապես պետք է նշել բազմավաստակ գիտնական Ասատուր Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» մեծածավալ աշխատությունը[4], որտեղ կան նաև Սիմեոնի բազմաթիվ զարդանկարները՝ իրենց գիտական մեկնաբանություններով:

Ձեռագրում մեզ հետաքրքրող մանրանկարները, որոնք կուզենայինք ներկայացնել, դուրս են մնացել ուշադրությունից: Դրանք տարբեր խորհրդանշաններ են, որոնք, կարծում ենք, միջնադարյան արվեստի ուսումնասիրման, ինչպես և ազգագրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ինչպես հայտնի է, ձեռագրերի զարդամոտիվներից շատերը դիտվում են որպես կրոնական թեմաներից բխող խորհրդանիշեր, որոնք մեծ մասամբ տեղ են գտել խորանների մեկնություններում:

Ուշագրավ խորհրդանիշեր կարելի է տեսնել նաև Սիմեոն ծաղկողի մոտ: Ավետարանի Մատթեոս ավետարանչի պատկերի խորքում, նրա աջ կողմում, պատկերված է նռան ճյուղ՝ նռներով, իսկ ձախ կողմում՝ խաղողի որթն է՝ ողկույզներով (տե՛ս նկ. 1): Անշուշտ .սա նկարչի պարզ երևակայությամբ ստեղծված հորինվածք չէ: Խորանների մեկնություններում նուռը բազմիցս դիտվել է որպես մարգարեների խորհրդանիշ. «Ծառերը նռենի են, որովհետև պտղի քաղցրությունը ծածկված էր կեղևի դառնությամբ, ինչպես Հին Օրենքով, իսկ պտուղը՝ ավետարանների մեջ գտնվեց, որ այդուհետև Կաթողիկե Եկեղեցին էր՝ երփներանգ գույներով զարդարված...»[5]:

Խաղողի որթը և նրա ողկույզները խորհրդանշում են Քրիստոսին իր աշակերտներով: Ինչպես Հիսուս է ասում իր աշակերտներին, «Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է: Մնացէք իմ մէջ եւ ես՝ ձեր մէջ. ինչպէս ճիւղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթէ որթատունկի վրայ հաստատուած չլինի. նոյնպէս եւ դուք՝ եթէ իմ վրայ հաստատուած չլինէք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը» (Հովհ. ժե 1, 4-5):

Նման զարդամոտիվ կարելի է տեսնել Աղթամարի Ա. Խաչ եկեղեցու արտաքին որմնաքանդակների շարքում: Տաճարի արևմտյան ճակատին Մատթեոս ավետարանչի դիմաքանդակն է: Նա պատկերված է դարձյալ Ավետարանը ձեռքին, իսկ ներքևում՝ որթատունկն է՝ խաղողի ողկույզներով ու նռան ճյուղերով[6] (տե՛ս նկ. 2): Այս հորինվածքը նույնպես պետք է որ կապված լինի Հովհաննեսի Ավետարանի հիշյալ հատվածի հետ: Այստեղ, որթատունկի չորս անկյուններում, ավելացված են չորս աղավնիներ, որոնք հայտնեցին Քրիստոսի մարդեղության խորհուրդը: Ինչպես Խորանների մեկնությունում է ասվում, «Նաև աղավնիներ (Մովսեսը և նրա ընկերները, Հեսուն և Դավիթը), կարմրակտուց, որովհետև հայտնեցին Քրիստոսի մարդեղության խորհուրդը»[7]:

---

[4] Մնացականյան Ա., Հայկական զարդարվեստ, Երևան, 1956, էջ:

[5] Ղազարյան Վ., Խորանների մեկնություն, Երևան, 1995, էջ 41:

[6] Տեր-Ներսեսյան Ա., Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, նկ. 3:

[7] Ղազարյան Վ., նույն տեղում, էջ 27:

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3

Նկարիչ-ծաղկողները, զարդը կամ դիմապատկերը նկարելիս, երբեմն նրա մոտ գրել են, թե ինչ են պատկերել: Նման բան հանդիպում է նաև Սիմեոն ծաղկողի այս ձեռագրի լուսանցազարդերից մեկում[8]: Այստեղ, զարդի ներքևում, կարմիր ներկով և գեղեցիկ բոլորգրով գրված է. «ՎԱՔ ՆՈՅՆ» (տես նկ. 3): Ավետարանում զարդի բացառիկ անվանում: Վաքը աստղի անուն է և հիշատակվում է Անանիա Շիրակացու «Մնացորդ բանից» աշխատության մեջ գլխում. «Յաղագս խառնարան աստեղաց. Շնաստղն, Խոզովակն, Վաքն, Ծիծառն... այս աստեղք են, որ ցուցանեն զանձրևաց սաստկութիւն և որ ի ծովու գնան սոքիմբք՝ մանաւանդ Սայլդ, յայտնի ցուցանէ գնաւագնացաց զհետ, զի հիւսիսական աստեղքդ ոչ են գնացականք, այլ կացականք և շարժեալք ի վերին եթ գօտեացն՝ որպէս ի ծովու աւէկոծին: Այս են նշանացոյց աստեղք»[9]: Ինչպես տեսնում ենք, համաձայն Շիրակացու մեկնության, «ՎԱՔ»-

[8] Մատենադարան, Ձեռ. 3722, թ. 153բ:
[9] Անանիա Շիրակացի, Մնացորդ բանից, Սանկ-Պետերբուրգ, 1877, էջ 73:

ը մտնում է «անձրևաց սաստկութիւն»-ը ցուցանող համաստեղության մեջ, իսկ այդ գուշակումը Նախիջևանի և հատկապես «հեղաշարժ» (վարարող) Արաքսի ափին բնակվող Աստապատի բնակչության համար, որոնց զբաղմունքը երկրագործությունն ու այգեգործությունն էր, կենսական նշանակություն է ունեցել:

Հայտնի է մեր թվարկությունից առաջ գոյություն ունեցող եգիպտական այն ավանդույթը, ըստ որի քրմապետերը «Սիրիուս» աստղի միջոցով գուշակում էին Նեղոսի վարարումը, որը մեծ դեր էր խաղում հողագործության ասպարեզում[10]:

Նախիջևանի հայությանը հավանաբար ծանոթ է եղել «ՎԱՔ» աստղը, և նրանով գուշակել են անձրևային հորդառատ տեղումները: Գուցե սա է առիթ հանդիսացել, որ նկարիչը հարկ է համարել այդ զարդը պատկերել Ավետարանում՝ որպես մարգարեական գուշակություն: Ժողովուրդը, Ավետարանին դիմելով, պետք է կարողանար կանխել վտանգը:

Նման բովանդակությամբ հայկական ժողովրդական ավանդապատումներից մեկն էլ վերաբերվել է ձյունափոթորկի գուշակմանը:

Հիշատակվում է, որ Մոկս գավառի Եղերով լեռան վրա շինված Սուրբ Գևորգ վանքը մշտապես ունեցել է մի աքաղաղ, որը գուշակել է ձյունափոթորիկը՝ կանչելով կամ լուռ մնալով, և դրանով զգուշացրել ճամփորդներին ճամփա ելնելիս. «Աքաղաղ – Մոկս գավառի Եղերով լեռան վրա շինված Փութկու կամ Փոթորկի Սուրբ Գևորգ վանքը միշտ կունենար աքաղաղ մը, որը կգուշակեր ձյունափոթորիկը, կանչելով կամ լուռ մնալով և կզգուշացներ ճամփորդները ճամփա ելլելե»[11]:

Խորանների մեկնություններից հայտնի է, որ աքաղաղը խորհրդանշում է մարգարեներին ու առաքյալներին[12]: Հավանաբար տեղի ժողովուրդն առաջնորդվել է դրանով՝ իր կենցաղի հետ կապված բնության երևույթներից պաշտպանվելու համար դիմելով Սուրբ Գևորգի օգնությանը:

---

10 Բաղալյան Հ., Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 43:

11 Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. Ա, Երևան, 1970, էջ 193:

12 Ղազարյան Վ., նույն տեղում, էջ 25: